Հաստատվել է
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու
2022 թվականի մայիսի 11-ի թիվ 37-Ն
որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սահմանել, որ.

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար 2021 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, եթե՝ երկկողմանի ծնողազուրկ և/կամ հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով առողջությունը խաթարած կամ զոհված անձանց երեխաներ են,

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար, եթե միակողմանի ծնողազուրկ, բազմազավակ, անապահով, նպաստառու և փախստական ընտանիքի երեխաներ են, ինչպես նաև եթե մեկ ընտանիքից հաճախում է 2 և ավել երեխա 2022 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, այն սահմանելով՝ 3 500 (երեք հազար հինգ հարյուր) դրամ,

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ենթակայության արվեստի դպրոցի (արտադպրոցական դաստիարակության հաստատություն) ուսումնական պլանով նախատեսված ծառայություններից օգտվողներ են սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձինք, ինչպես նաև զուգահեռաբար վճարովի երկու բաժնում և միևնույն ընտանիքից երկու և ավելի բաժնում սովորող աշակերտները, բազմազավակ, անապահով, նպաստառու և փախստական ընտանիքի աշակերտները, ապա ծառայություններից օգտվողների համար 2022 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով.

ա. գործիքային (դաշնամուր, կիթառ) բաժիններում ուսուցման համար՝ ամսական 2 500 (երկու հազար հինգ հարյուր) դրամ.

բ. մնացած բաժինների ուսուցման համար՝ ամսեկան 1 750 (մեկ հազար յոթ հարյուր հիսուն) դրամ

4) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքարի ենթակայության մարզադպրոցի ծառայություններից օգտվողների համար 2022 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ, սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված անձինք,

5) Եթե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մարզադպրոցի ծառայություններից օգտվողներ են բազմազավակ կամ անապահով ընտանիքի երեխաները, ապա ծառայություններից օգտվողների համար 2021թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են դրույքաչափի նվազեցման արտոնություններ, դրանք սահմանելով 500 (հինգ հարյուր) դրամ,

6) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կողմից աղբահանության ծառայություններից այն օգտվողների համար, որոնք հայրենիքի պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով զոհված կամ առողջությունը խաթարած անձանց ընտանիքի անդամներ են կամ 1-ին խմբի հաշմանդամներ են՝ 2022 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ տեղական վճարի նկատմամբ զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

7) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կողմից աղբահանության ծառայություններից օգտվող Նորակերտ, Բաղրամյան, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Արևաշատ, Այգեկ բնակավայրերի բնակիչների համար 2022 թվականի համար սահմանված տեղական վճարի դրույքաչափի նկատմամբ կիրառվում են արտոնություններ՝ աղբահանության վճարը սահմանելով 150 դրամ:

2. Սույն որոշմամբ նախատեսված արտոնությունների կիրառման համար հիմք են հանդիսանում հետևյալ փաստաթղթերը. Փարաքար համայնքի ղեկավարին ուղղված ծառայությունից օգտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումը, որին կցվում են վերջինիս անձնագրի պատճենը, ծառայությունից օգտվողի ծննդյան վկայականի պատճենը և (կամ) պաշտպանության ոլորտի իրավասու պետական կամ այլ մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի և (կամ) վկայականի և (կամ) տվյալ փաստը հավաստող այլ փաստաթղթերի պատճենները: